բազգիներին և բոլոր ժողովրդոց Բագուայ, և իւրաքանչիւր պաշտօնէի պաշտօնին վերաբերեալ պատուէրը աւանդեց։

Յետոյ երբ յայտնեցին որ երկաթուղւոյ գնացքը պատրաստ է, Վեհափառ Տէրը բարձրացաւ տեղից և օրհնեց և մնաք բարով արեց ամենին. ապա բոլորը հերթով յառաջ գնալով Վեհափառի Ս. աջը համբուրեցին։

Նորին Վեհափառութիւնը երիցս իւր աջը համբուրող նահանգապետին օրհնեց՝ ասելով. «Շատ շնորհակալ եմ. լաւ տպաւորութիւն տարայ ձեր կարգադրութիւնների նկատմամբ»։

Այս խօսքերից յետոյ՝ Վեհափառ Տէրը բարեհաճեց համբուրել նորա ճակատը։ Ապա օրհնեց քաղաքագլխին ասելով՝ «Յիրաւի արժանաւոր քաղաքը, արժանաւոր ժողովուրդը արժանաւոր քաղաքագլուխ ունի»։

Այնուհետեւ Նորին Օծութիւնը դուրս գնաց երկաթուղւոյ տափարակի վրայ և անցաւ բարձրացաւ երկաթուղւոյ կառքը. բազմութիւնը որոտաձայն կոչեց և կրկնեց և երեքկնեց. «Կեցցէ Հայոց եկեղեցին, կեցցէ Հայոց Հայրապետ». բազմութեան ձայնը օդը թնդացրեց. Վեհափառ Տէրը վագոնի պատուհանից դարձեալ օրհնեց ժողովրդին, և Պահպանիչով և «Հայր մեր»ով վերջացրեց իւր օրհնանքը։ Ժողովրդի աղաղակը թնդաց օդի մէջ, երկաթուղու կառքը շարժուեց և յառաջ գնաց. ժողովուրդը ընդ երկար կեցցէներ կանչելով նայում էր գնացքին. և ապա պատմելով և ուրախանալով Կաթուղիկոսի այցելութեան համար վերադարձան իրենց գործին, բարի ճանապարհ մաղթելով Նորին Օծութեանը, որ այն օրը պէտք է գնար Գանձակ քաղաքը (Ելիսաւէտապոլ) և վաղը Ազստաֆայ, և այն տեղից Դիլիջան, Երեւան և Էջմիածին։